Հավելված N1
«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ
Բաժնետիրոջ «11» փետրվարի 2014թ.
որոշման

Տպագրվել է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Բաժնետիրոջ «11» փետրվարի 2014թ. որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 30.12.1997թ.
Գրանցման համար՝ 264.120.04128
Վկայական՝ 01 Ա 039934
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 00046317
20.06.2000թ. գրանցված Կանոնադրության թիվ 013-3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման բաժնի կողմից «24» 02 2014թ.

Գ/Բ պետ

# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

ք. Երևան, 2014թ.

### Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հայ-Ռուսական «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարության, «Գազպրոմ» ԲԲԸ, "ITERA international Energy, L.L.C." կողմից նրանց միջև 1997թ.օգոստոսի 30-ի Հիմնադիր պայմանագրի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա, Հայաստանի Հանրապետության կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ միջև 1997թ. հունվարի 18-ին ք. Մոսկվայում կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում գազամուղների շինարարության և շահագործման, Հայաստանի Հանրապետության տարածքով ռուսական բնական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրա տարանցման համագործակցության մասին» Համաձայնագրի համապատասխան:

Ընդհանուր համաժողովի 2006թ. մայիսի 5-ի որոշմամբ /Արձանագրություն թիվ 11-3/ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն վերակազմակերպվել է նրան՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Գազպրոմաերվիս» ՍՊԸ, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Ուսումնատեխնիկական կենտրոն» ՍՊԸ և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազկոնստրուկտիվպաշտպանություն» ՍՊԸ միացնելու միջոցով:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հանդիսանում է նրան միացվածների իրավունքների և պարտականությունների իրավահաջորդը՝ դուստր ընկերությունների փոխանցման ակտերին համապատասխան.

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Գազպրոմաերվիս» ՍՊԸ,

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Ուսումնատեխնիկական կենտրոն» ՍՊԸ և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազկոնստրուկտիվպաշտպանություն» ՍՊԸ:

Միակ բաժնետերի «11» «02» 2014թ. որոշմամբ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/:

1.2. Ընկերության իրավական կարգավիճակը, դրա բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

1.3. Ընկերության գործունեության ժամկետը սահմանափակված չէ:

1.4. Ընկերության և հարակից գրագրության պաշտոնական լեզուներ են հանդիսանում ռուսերեն և հայերեն լեզուները: Ընկերության աշխատանքային լեզուն հանդիսանում է ռուսերենը: Երրորդ անձանց հետ գրագրությունում Ընկերությունն իրավունք ունի օգտվել նաև այլ լեզուներից:

### Հոդված 2. Ընկերության ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը

2.1. Ընկերության ֆիրմային անվանումը հայերեն լեզվով.

- լրիվ՝ [«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն],
- կրճատ՝ [«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ]:

2.2. Ընկերության ֆիրմային անվանումը ռուսերեն լեզվով.

- լրիվ՝ Закрытое акционерное общество «Газпром Армения»,
- կրճատ՝ ЗАО «Газпром Армения»:

# ՆԵՐԴԻՐ 024

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 01Ա039934 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» (ՓԲԸ)**

Գտնվելու վայրը

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար. **Գլխավոր տնօրեն՝ ՀՐԱՆՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԽԱՉԻԿԻ**
անձնագիր **AK0388603**, տրվ. **2009-10-19, 011** կողմից,
հասցե **ՊԱՐՈՆՅԱՆ 3 ՆՐԲ. / Տ / 20 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը

Այլ տեղեկություններ**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության գրանցում:**
**Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2016-11-01-ին**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Կ.Տ. (ստորագրություն)

01/11 2016 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին